համաժողով

Աննա Հակոբյան

համատեղ ուժերով՝ նոր ծրագիր

ՀՀ ԳԱԱ-ում քննարկվեցին գիտության ոլորտի զարգացման ուղիները:

Հայաստանի գիտնականների հասարակական խորհրդի (ՀԳՀԽ) նախաձեռնությամբ ՀՀ Գիտությունների Ազգային ակադեմիայում (ԳԱԱ) երեկ կազմակերպված համաժողովում քննարկվեցին գիտության ոլորտի բարեփոխումների վերաբերյալ առաջարկությունների 3 փաթեթներ: Դրանք ներկայացրել էին ՄԱԿ-ի Զարգացման ծրագրի հայաստանյան ներկայացուցչությունը, ԳԱԱ-ի նախագահությունը եւ ՀԳՀԽ-ն:

ԳԱԱ-ի մշակած բարեփոխումների ծրագրով, որը փոխանցվել է կառավարությանը, նախատեսվում է ակադեմիական եւ այլ գիտահետազոտական կազմակերպություններում, առաջատար բուհերում ստեղծել գերակա եւ այլ հեռանկարային ուղղությունների գծով գիտակրթական կենտրոններ, ինչպես նաեւ գիտակրթաարտադրական համալիրներ՝ գիտական, արտադրական կազմակերպությունների, այդ թվում՝ մասնավոր սեկտորի եւ բուհերի մասնակցությամբ: Ծրագրով առաջարկվում է նաեւ ներգերատեսչական եւ միջգերատեսչական ուղղվածության կառուցվածքային փոփոխություններ կատարել գիտական կազմակերպություններում, հիմնարար հետազոտություններով զբաղվող գիտական կենտրոնները եւ ինստիտուտները կենտրոնացնել ՀՀ ԳԱԱ համակարգում եւ այլն:

ՀԳՀԽ-ն առաջարկում է արմատական փոփոխություններ իրականացնել ԳԱԱ-ի համակարգում՝ վերածելով այն հզոր, առաջատար գիտա-կրթական կառույցի, երկրի գիտատեխնիկական զարգացման առաջատար օղակի: Կազմակերպությունն առաջարկում է նաեւ գիտական գործունեության կազմակերպման, կոորդինացման եւ փորձաքննության նպատակով ստեղծել գիտական խորհուրդների սկզբունքորեն նոր համակարգ՝ դրանք համալրել առաջատար գիտահետազոտական ինստիտուտների առաջատար գիտնականներով՝ ռոտացիոն սկզբունքով: ՀԳՀԽ-ն անհրաժեշտ է համարում ստեղծել գիտության համահայկական հիմնադրամ, որը պետք է կառավարվի ռոտացիոն սկզբունքով գիտական խորհուրդների եւ բարեգործական կազմակերպությունների ներկայացուցիչներից կազմված հոգաբարձուների խորհրդի կողմից:

Համաժողովի մասնակիցները խիստ քննադատության ենթարկեցին ՄԱԿ-ի Զարգացման ծրագրի հայաստանյան ներկայացուցչության առաջարկությունների փաթեթը: Իր ելույթում, մասնավորապես, ՀՀ ԳԱԱ Նուրբ օրգանական քիմիայի ինստիտուտի տնօրեն Բագրատ Ղարիբջանյանը նշեց, որ ուշադրությամբ ծանոթացել է այդ փաթեթին, որի առաջին 50 էջն, ըստ նրա, այն մասին է, թե ինչու է Հայաստանի գիտությունը հայտնվել ներկայիս վիճակում: Սակայն բուն առաջարկությունները գիտնականը մերժելի է համարում: ՄԱԿ-ի ներկայացուցչության առաջարկած ծրագրի մասին ավելի կտրուկ արտահայտվեց Մոլեկուլյար կենսաբանության ինստիտուտի տնօրեն Կոնստանտին Ղարագյոզյանը: Նրա խոսքերով, եթե դրանք ընդունվեն, ապա դա կբերի Ակադեմիայի «քայքայմանը, դեմոնտաժին, այսպես կոչված՝ օպտիմալացմանը»:

Քննարկումների արդյունքում առաջարկվել է համատեղ ուժերով մշակել գիտական ողջ համայնքին բավարարող նոր ծրագիր: